բաններից երևում է, որ վանքի անունն էր «Աղբերց վանք», բայց աւելի տարածուած էր «Գլաձոր», երբեմն և «Գայլեձոր» անունը. եկեղեցին նուիրուած էր Ս. Ստեփանոսի անուան։

Առաջին անգամ վանքի անունը յիշւում է 1280 թուին, երբ Ներսէս Մշեցին հաստատեց այնտեղ իւր վարժապետական աթոռը(*)։ Ո՞վ էր Ներսէսը, այս հարցին պատասխան է տալիս Ցայսմաւուրքի մէջ պահուած նորա վկայաբանութիւնը. նա Տարօնի Մուշ քաղաքից էր, սնուած և կրթուած Ղազարու Ս. Առաքեալ վանքում. «կարի քաջ վարժեալ ի գիր եւ յուսումն յունաց եւ սերտ գիտէր զլեզուն Հռոմոց եւ զերիցութի. նոցա»։ Ապա հանդիպում է հոգելից Վարդան վարդապետին և աշակերտում նորան. Վարդանի մահուանից յետոյ նստում է նորա վարժապետական աթոռը, «եւ լուսաւորեաց զիտութիւն. զազգս Հայոց ուսմամբ գրոց». խորին ծերութեան հասած, մեռնում է Գլաձորի վանքում ՁԼԳ (= 1284) թուին։ Այս համառօտ կենսագրականը, գրեթէ, բառացի թարգմանուած է նորա վկայաբանութիւնից, որ, անշո՛ւշտ, նորա կեանքին լաւ տեղեակ և ականատես անձի գրած է (Ցաւել. Բ. 59)։ Ալիշան բերում է Ներսեսի վարքի մի տարբեր խմբագրութիւն, որից երևում է, թէ Ղազարու վանքից նա անցել է նախ Բաջքերունեաց գաւառը, «եւ ժե. ամ անդ էր փոխեալ դասատուն վարդապետաց մերոց»(**). այստեղից նա պէտք է փոխադրուած լինի Արարատեան երկիրը, աշակերտած Վարդանին և ապա նորից Առաքելոց վանքը վերադարձած, ինչպէս կը տեսնենք, և վերջապէս 1280 թուին հաստատուած Գլաձորում։

Ձեռագիրների մէջ մի ճառ ունինք «Յովհաննէս վդի. ասացեալ ի պայծառ այլակերպութի. տն. ի Թաբոր լերինն» վերնագրով։ Հեղինակը իւր ճառի վերջում բարեմաղթութիւններ է անում հոգևոր և մարմնաւոր իշխանաւորների համար. ընդհանուր կերպով ննջեցեալ քրիստոնեաներին յիշելուց յետոյ՝ աւելացնում է. 217ա. «և զաշխարհալոյս վրդտն. զԳոչն, զՎանական, զՎարդան, զՆերսէս, զԵսայի, որ կան շիրիմք նոցա առ դուրս սբ. եկեղեցոյ, որով այժմ արդիւնաւորի եկեղեցի ի բանից նց.»։ Կարծում ենք հեղինակը Յոհան Որոտնեցին է, յամենայն դէպս ապրում էր այնպիսի ժամանակ, երբ դեռ չէր վերջացել Ռուբինեանց թագաւորութիւնը։ Տաթևացին ևս իւր Յովքայ մեկնութեան յիշատակարանում բերում է վարդապետների նոյն շարքը. «եւ ժողովողն մեկնութենս. է Վանական վրդն., աշակերտ Մխիթր. վրդպի., որ Գոչ անուանի. և է սայ վրդն. Վարդանայ, եւ Վարդան Ներսեսի և նա Եսայայ վրդտին., որ եւ Յովհաննու Որոտնեցոյ Լուսաւորչին(***)։

Գլաձորի դպրոցի ծագումն ու հաստատութիւնը պարզելու համար, անհրաժեշտ է փոքր ինչ աւելի կանգ առնել Ներսէս վարդապետի ուսուցիչ Վարդանի վարժապետական գործունէութեան վերայ։ Նա Վանականի աշակերտն էր, Կիրակոս Գանձակեցու, Մաղաքիայի աշակերտակիցը, նշանաւոր հանդիսացած իւր պատմութեամբ և ուրիշ գրուածներով(*). այստեղ մեզ հետաքրքրում է միայն նորա վարժապետական գործունէութիւնը, թողնելով այլ առթիւ պարզելու ԺԳ. դարի Վարդանների և նրաց գրական երկերի կնճռոտ հարցը։ Մեր «Ձագավանից ժողովը» աշխատութեան մէջ բերել ենք Գէորգ Լամբրոնացու ձեռքով 1267 թուին գրուած Տօնապատճառի յիշատակարանից վկայութիւն նաև Վարդանի վարժապետական գործունէութեան մասին Խոր Վիրապում, «որ ընդ այն ժամանակս ի վերա ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն (կա)տարի առաքինութի., և զուսուցապետութեն. ևս զգործ ի կիր արկեալ, ընդ առնելն լծակցելով, որ ի դուռն Սրբոյն Գրիգորի նստելով՝ զամենայն եկեալսն յածայլինսն ուղղէր ճանապարհ»(**)։ Վարդանի վարժապետական գործունէութեան մասին Խոր Վիրապում ունինք և ուրիշ աղբիւր, Գրիգոր Բալուեցու վկայաբանութեան հեղինակը՝ թէև ուշ՝ 1290 թուին՝ բայց աղբիւր ունենալով իւր մօրեղբայր Նահատակին՝ Խոր Վիրապում եղած աշակերտների թիւը քառասուն է համարում. «և գնացեալ (Գրիգոր Բալուեցին) դադարէր յարևելս՝ յԱրարատեան գաւառն՝ ի վանքն Վիրապի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, առ հռչակաւոր իմաստասէր վարդապետն Հայոց Վարդան, որ և դպրոց կարգեալ էր նորա Ա. աշակերտօք»(***)։ Այստեղ Բալուեցին մընում է վեց տարի և ապա վարդապետական գաւազան ստանում Վարդանից նորա մահուան կամ նախընթաց տարին։ Բացի Գէորգ Լամբրոնացուց Վարդանի աշակերտներն էին Յովհաննէս Երզնկացին(****) եւ Գրիգոր Բջնեցին, վերջինս իւր մասին յայտնում է՝ «սնեալ եւ վարժեալ առ ոտս տիեզերալոյս, սբ. եւ երանաշնորհ բարձունապետին Վարդանայ»(*****)։

(*) Ձեռ. Էջմ. № 1111/1907։

(**) Սիսական, եր. 131։

(***) Ձեռ. Էջմ. № 1174. 205բ.։ Լիմ անապատի № 214, 139բ. (այժմ Էջմիածնում) ընդգծուածը չունի. սակայն Տաթևացու կենսագրութիւնից գիտենք, որ Յոհան Որոտնեցին նշեցու աշակերտն էր (Ձեռ. Լիմի № 358. Արարատ. 1916. 29)։

(*) Ինչ որ վերագրւում է նորան, կասկածից աչատ չէ։ ԺԳ. դարում ապրում էին մի քանի Վարդաններ, չհաշուած Շնորհալու ժամանակակից Վարդան Հաղբատեցին, որին յիշում է և Գրիգոր Տղայ Տուտէորդուն գրած նամակի մէջ (Արարատ. 1893. 326)։ Սրան չպէտք է շփոթել Վարդան Այգեկցու հետ, ինչպէս արել է այդ մեծանուն գիտնական Մառը իւր Sbornik Pritcht Vardana մեծ աշխատութեան մէջ (եր. 263. 323)։ Վարդանի մասին Հ. Ոսկեան. «Վարդան Արևելցի», Հ. Ամ. 1921. 364 և շար.։

(**) Ձեռ. Էջմ. № 295։ Շողակաթ ժողովածու 31/2։

(***) Մանանդեան և Ա.ճառեան. Հայոց Նոր Վկաները. գիտակ. հրատ. Վաղարշապատ. 1903. 104։

(****) N. Marr, Sbornik Pritcht Vardana, III. 22։

(*****) Ձեռ. Էջմ. № 1253 (Կար. 1223)։